

ԳԱՆՁԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

04.10.2011թ.

Ժողովին մասնակցում են համայնքի ղեկավարը և նրա աշխատակազմը, համայնքի ավագանու անդամներ, համայնքում գտնվող ժող.կրթության և սպասարկման օբյեկտների կոլեկտիվները, Իջևան քաղաքի հիմնարկ - ձևարկություններում աշխատող գյուղի բնակիչներ, ԳՏ անդամներ, Ա/Ձ ներկայացուցիչներ, ուսանողներ, կենսաթոշակառուներ:

Ժողովի նախագահ է ընտրվում համայնքի էլեկտրամատակարարման տեղամասի վարիչ Վ. Բեգինյանը, քարտուղար՝ մշակույթի տան աշխատակից Հ. Խաչինյանը:

Օրակարգ

Գանձաքր համայնքի ղեկավար Շ.Շահինյանի հաշվետվությունը 2011թ. երրորդ եռամսյակում կատարած աշխատանքների վերաբերյալ

/զեկ. Շ.Շահինյան/

Ձեկուցողը նշեց, որ <<Տեղական ինքնակառավարման >>օրենքով պետության կողմից պատվիրակված, պարտադիր և կամավոր լիազորությունների շրջանակներում լուծվել են այն խնդիրները, որոնք դրված են եղել համայնքի առջև հաշվետու ժամանակաշրջանում:

Համայնքի կենտրոնական ճանապարհի ասֆալտապատման աշխատանքներին գույքնթաց ծագել են խնդիրներ, որոնք անհրաժեշտ է եղել կատարել համայնքի միջոցներով կապված ջրահեռացման ուղիների վերանորոգման հետ:

Դիմել ենք Տավուշի մարզպետին շինարարությա նախագծով որոշ աշխատանքների կատարման համար, որի արդյունքում ջրահեռացման գիծ է անցկացվել մտուր – մանկապարտեզի մոտ և գյուղի կենտրոնում:

Դիմել ենք ՀՀ նախագահին ասֆալտապատման աշխատանքները երկարացնել 650 գծամետրով՝ մինչև ավտոբուսի վերջին կանգառը

<< Կլատան գետից >> անցկացվում է ոռոգման ջրագիծ, 4 կմ երկարությամբ:

Համայնքում մշտապես առաջնային խնդիր է հանդիսանում խմելու ջրի հարցը: Դեռևս նախորդ տարի 60 – 70 -ական թվականներին գյուղի մի շարք թաղամասեր իրենց միջոցներով անց են կացրել խմելու ջրագծեր, որոնք այժմ ֆիզիկապես և բարոյապես մաշված են և դրանք ունեն նորով փոխարինելու կամ կապիտալ նորոգման կարիք: 2010թ. ընթացքում ՀՀ կառավարության կողմից կատարվել են <<Բրխան- Գանձաքար>> խմելու ջրագծի նախագծային – նախահաշվային աշխատանքները, սակայն որի կատուցումը նախատեսված չէ 2011թվականին:

Ներքին թաղամասի շուրջ 20 տնտեսություններ 0,65մն հզորությամբ խմելու ջրատար են անցկացրել 4 կմ երկարությամբ, որին համայնքի բյուջեից տրվել է 200,0հազար դրամ ֆինանսական աջակցություն:

Ավարտին է մոտենում ՀՀ ազգային ժողովի պատգամավոր Հ.Հակոբյանի կողմից և միջոցներով մտուր – մանկապարտեզի կապիտալ նորոգման աշխատանքները:

Ինչ վերաբերվում է համայնքի բյուջեի եկամուտների հավաքագրման ցուցանիշն, ապա զեկուցողը նշեց, որ համայնքի բնակչությունը պետք է պարտաշանաչ կերպով

վճարի հարկերը, որոնք կնպատակաուղղվեն համայնքի սոցիալ տնտեսական զարգացմանը:

Անդրալստնալով գյուղատնտեսության բնագավառին նշվեց, որ գյուղապետարանը մշտապես կաջակցի այն գյուղացիական տնտեսություններին, որոնք կկատարեն աշխանացան ցորենի ցանք:


Վերջում գեկուցողը ներկաներին ծանոթացրեց համայնքում մշակույթի և սպորտի զարգացման ուղղությամբ կատարված աշխատանքներին և առաջիկա ծրագրերին: Ջեկուցման ավարտից հետո համայնքի ղեկավարը պատասխանեց իրեն ուղղված հարցերին:

Ելույթներ ունեցան համայնքի տարածում գործող Ժող. կրթության և սպասարկման օրյեկտների ղեկավարները, որոնք նշեցին 2011թ. երրորդ եռամսյակի ընթացքում կատարած աշխատանքների և առաջիկա խնդիրների մասին, ելույթներով հանդես եկան համայնքի ավագանու անդամներ, գյուղացիական տնտեսության ներկայացուցիչներ և համայնքի այլ անդամներ, որոնք առաջարկեցին համայնքի ղեկավարի կողմից 2011թ. երրորդ եռամսյակում կատարած աշխատանքները գնահատել դրական:

Ժողովը որոշեց

Գանձաքար համայնքի ղեկավար Շ.Շահինյանի կողմից կատարած ածխատանքները 2011թ. երրորդ եռամսյակի ընթացքում գնահատել ԴԲԱԿԱՆ:

Ժողովի նախագահ՝ Գ. Բեգիսյան
Բարսուղար՝ Ն. Խաչիկյան



ԳԱՆՁԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
01.07.2011թ.

Ժողովին ներկա են՝

Համայնքի ղեկավարը, համայնքի ղեկավարի աշխատակազմը, գյուղապետարանի ենթակայության օբյեկտների և համայնքում գտնվող մյուս կազմակերպությունների՝ դպրոցի, կապի բաժանմունքի, էլեկտրամատակարարման տեղամասի աշխատավորական կոլեկտիվները, ԵՊՀ –ի Իջևանի մասնաճյուղի ուսանողներ, գյուղացիական տնտեսության ներկայացուցիչներ, անհատ ձեռներեցներ, թոշակառուներ;

Ժողովի նախագահ է ընտրվում մշակույթի տան տնօրեն Ս. Դովլաթբեկյանը, քարտուղար գյուղապետարանի աշխատակից Հ. Ներկարարյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ.

Գանձաքար համայնքի ղեկավար Շ.Շահինյանի հաշվետվությունը 2011թ. երկրորդ եռամսյակում կատարած աշխատանքների վերաբերյալ
/ զևկ. Շ.Շահինյան/

Հաստատվեց հետևյալ աշխատակարգը՝

Ջեկուցման համար – 1 ժամ

Ելույթների համար - 10 – 15 րոպե

Համայնքի ղեկավարը իր ելույթի մեջ մանրամասն նշեց այն աշխատանքների մասին, որոնք կատարվե են 2011թ. երկրորդ եռամսյակում, մասնավորապես Գանձաքարի միջնակարգ դպրոցի սպորտ – դահլիճի վերանորոգման, դուռ-պատուհանների փոխարինումը կնքարտադրության նմուշի ընթանում է շատ ինտենսիվորեն և այն նախատեսվում է ավարտել մինչև 2011թ. ուսումնական տարվա սկիզբը՝ սեպտեմբերի 1-ը;

Պատգամավոր Հ. Հակոբյանի միջոցներով կապիտալ նորոգման և ենթարկվում մտուր – մանկապարտեզի շենքը և այն նախատեսվում է ավարտել մինչև տարեվերջ:

Հաշվետու ժամանակաշրջանում գյուղի «<Ներքին>> թաղամաս կանգառում համայնքի միջոցների հաշվին կառուցվել է աասաճաճկ:

2011թ. ապրիլ – մայիս ամիսներին լայնածավալ բարեկարգման աշխատանքներ է Կատարվել կենտրոնական և թաղամասային ճանապարհներում. ապրի կուտակման վայր է տեղափոխվել ավելիքան 100 տոննա կենցաղային սղբ,բարեկարգվել է գյուղապետարանի,բուժ.կետի,մտուր – մանկապարտեզի,մշակույթի տան, դպրոցի շրջակա տարածքները:

Համայնքի բյուջեի եկամուտների հավաքագրման ցուցանիշը 01.07.2011թ. դրությամբ կազմում է 90,5 տոկոս:

Եթե 2010թ. դիտվեց որպես վատ գյուղատնտեսական տարի ընակլիմայական անբարենայաստ պայմանների պատճառով, ապա բարձր բերքատվության մակարդակը է ակնկալվում համայնքի գյուղացիական տնտեսություններում 2011թ. բերքահավաքի ընթացքում,2011թ. օգոստոս ամսվա ընթացքում նախատեսվում է կազմակերպել գյուղացիական տնտեսությունների աշնանուցան ցորենի 20 հա-ի և գարնանուցան գարու 27 հա-ի հունձը համայնքի կոմբայնով և առաջարկվեց

ավելացնել աշնանացան ցորենի ցանքատարածությունները՝ երաշխիք հայտնելով որ կարիքավոր տնտեսություններին շուկայականից ցածր գներով կհատկացնի ցորենի էլիտար սերմացու:

Ջնկուցման ավարտից հետո առաջարկվեց անցել էլույթներին, հարցերը տրվել են վերջում:

Էլույթներ ունեցան համայնքում գործող օբյեկտների ղեկավարները, համայնքի անդամներ Լ. Ղովլաթբեկյանը, Ս. Մառիկյանը, Պ. Ջանիսյանը, Ս. Մարդանյանը, Ս. Մարտիրոսյանը, Գ. Արզումանյանը:

Համայնքի ղեկավարը և էլույթ ունեցողները պատասխանեցին իրենց ուղղված հարցերին:

Առաջարկվեց համայնքի ղեկավարի կողմից կատարած աշխատանքները 2011թ. երկրորդ եռամսյակում գնահատել՝ դրական:

Ժողովը որոշեց.

Գանձաքար համայնքի ղեկավար Շ. Շահինյանի կողմից կատարած աշխատանքները գնահատել՝ ԴԲԱԿԱՆ:

Ժողովի նախագահ Լ. Մարտիրոսյանի կողմից կատարած աշխատանքները գնահատել՝ ԴԲԱԿԱՆ:



ԳԱՆՁԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻԹ
05.04.2011թ.

Ժողովին մասնակցում են՝

Համայնքի ղեկավարը և նրա աշխատակազմը գյուղապետարանի ենթակայության Օբյեկտների՝ մսուր – մանկապարտեզի, մշակույթի տան, բուժ.կետի, ինչպես նաև դպրոցի կոլեկտիվները, գյուղացիական տնտեսության անդամներ, համայնքում մանրածախ առևտրով զբաղվողներ և այլ անհատ ձեռներեցներ, ուսանողներ, կենսաթոշակառուներ

Ժողովի նախագահ է ընտրվում համայնքի ղեկավարի օգնական Վ. Մկիթսեթյանը, քարտուլյար՝ մշակույթի տան աշխատակից Տ.Մովսիսյան:

ՕՐԱԿԱՐԳ

Գանձարար համայնքի ղեկավար Շահեն Շահինյանի հաշվետվությունը 2011թ. առաջին եռամսյակում և կատարած աշխատանքների վերաբերյալ
/զեկուցող Շ.Շահինյան/

Զեկուցողը ժողովի մասնակիցներին ներկայացրեց պետության կողմից պատվիրակված, պարտադիր և կամավոր իրեն վերապահված յիստորությունների շրջանակում 2011թ. առաջին եռամսյակի ընթացքում կատարված աշխատանքները: Համայնքի միջոցների հաշվին վերանորոգվել է Բեզինյանների թաղամասային ճանապարհը, ավարտվել է մշակույթի տան ընթացքի նորոգման աշխատանքները վերանորոգվել է գյուղապետարանի ֆին.բաժնի կաբինետը, բարեկարգվել է դպրոցի ճանապարհը, «Վերին...թաղամասի կանգաթի մոտ կատարվել է «Կլատան» գետի որոգման ջրագծի վերանորոգման աշխատանքներ:

2011թ. առաջին եռամսյակում կատարվել է գույքահարկի պլանը, 85 տոկոսով հողի հարկի, 67 տոկոսով հողի վարձակալական վճարները եռամսյակային կտրվածքով: Այնուհետև նշվեց այն խնդիրների մասին, որոնք նախատեսվում է կատարել 2011թ. զարնան բարեկարգման երկամսյակի /ապրիլ, մայիս/ ընթացքում:

Զեկուցողը նշեց նաև գյուղապետարանի ենթակայության օբյեկտների կողմից 2011թ. առաջին եռամսյակում կատարած աշխատանքների մասին:

Զեկուցման ավարտից հետո նա պատասխանեց բնակչության կողմից բարձրացված հարցերին:

Ելույթներ ունեցան նաև՝

Մշակույթի տան տնօրեն Ա.Դովլաթբեկյանը, մսուր – մանկապարտեզի տնօրեն Ա. Ներկարայանը, բուժ.կետի տնօրեն Լ.Մատինյանը, դպրոցի տնօրեն Ա.Մատինյանը: Նրանք հիմնականում խոսեցին այն խնդիրների մասին, որոնք ծառայած են իրենց կազմակերպությունների առջև:

Ելույթներ ունեցան նաև համայնքի անդամներ, որոնք առաջարկեցին համայնքի ղեկավար Շ.Շահինյանի կողմից 2011թ. առաջին եռամսյակում կատարված աշխատանքները գնահատել դրական:

Ժողովը որոշեց

Գանձարար համայնքի ղեկավար Շ.Շահինյանի կողմից 2011թ. առաջին եռամսյակի
ընթացքում կատարված աշխատանքները գնահատել՝ ԳՐԱԿԱՆ:

Ժողովի նախագահ

Քարտուղար

Մ.Մ. Մելիքսեթյան
Ս.Ս. Մովսիսյան

05.04.2011թ.

